



- Կալիֆորնիան պետք է տասը տարին մեկ վերագծի իր Կոնգրեսական, Նահանգային Սենատի, Նահանգային Ժողովի և Նահանգային հավասարեցման խորհրդի շրջանների սահմանները՝ արտացոլելու համար նոր դաշնային մարդահամարի բնակչային տվյալները:
- Մինչ 2008 թվականը, Կալիֆորնիայի օրենսդիրներն իրենք էին գծում իրենց շրջանի սահմանագծերը: 2008 թվականի նոյեմբերին Կալիֆորնիայի ընտրողները ընդունեցին «Զվեարկողները ՆԱԽ օրենքը» (Voters FIRST Act) (Օրենք), լիազորելով ստեղծումը Շրջանների վերադասավորման քաղաքացիական հանձնաժողովի (Citizens Redistricting Commission) (Հանձնաժողով)՝ շրջանային նոր սահմանագծեր գծելու համար, օրենսդիր մարմնի ձեռքից խլելով աշխատանքը: 2010 թվականին Կոնգրեսի համար Զվեարկողները ՆԱԽ օրենքը Կոնգրեսական շրջանների (Voters FIRST Act for Congress) գծման պատասխանատվությունը հանձնեց Հանձնաժողովին:
- Օրենքը պահանջում է, որ Կալիֆորնիայի Նահանգային ստուգողը՝ մի անկախ, անկուսակցական Էություն, կառավարի Հանձնաժողովի անդամներին ընտրելու դիմումի գործընթացը՝ Կալիֆորնիայի աշխարհագրական, մասնագիտական և սոցիալական բազմազանությունը արտացոլելու համար: Հանձնաժողովը բաղկանում է 14 անդամից՝ հինգ Դեմոկրատ անդամներ, հինգ Հանրապետական անդամներ և չորս անդամներ, ովքեր այս կուսակցություններից ոչ մեկին չեն պատկանում:
- Համաձայն հարաբերաբար հավասար բնակչությամբ շրջաններ ստեղծելու համար նախատեսված խիստ, անկուսակցական կանոններին և բոլոր Կալիֆորնիացիներին արդար ներկայացուցչություն ապահովելու նպատակին, Հանձնաժողովը գծում է սահմանները Կոնգրեսական շրջանների, Նահանգային Սենատի շրջանների, Նահանգային Ժողովի շրջանների և Նահանգային Հավասարեցման խորհրդի շրջանների: Վերջնական չորս քարտեզները Հանձնաժողովի կողմից վավերացվելուց հետո, քարտեզները հաստատագրվում են Կալիֆորնիայի Նահանգային քարտուղարին մի զեկույցով, բացատրելով, թե Հանձնաժողովն ինչ հիմքի վրա է կայացրել իր որոշումները:
- Հանձնաժողովը կանցկացնի հանրային հանդիպումներ և կընդունի հանրության ներդրումը զանազան եղանակներով՝ օգնելու համար նոր շրջանային քարտեզների գծման: Հանրությունը կարող է մասնակցել նկատողություններ ներկայացնելով մեր կայքում, մեր հանդիպումներից մեկում, շահագրգիռ համայնքների քարտեզագրման գործիքի միջոցով և իրենց ներդրումը փոստով ուղարկելով:
- Հանձնաժողովը շրջանային քարտեզների գծման պահին պետք է հետևի հետևյալ չափանիշներին, այս հերթականությամբ՝
 1. Շրջանները պետք է ունենան հավասար բնակչություն, որպեսզի համապատասխանեն ԱՄՆ Սահմանադրության:



2. Շրջանները պետք է ենթարկվեն Զվեարկության իրավունքների օրենքին (Voting Rights Act), երաշխավորելու համար փոքրամասնությունների՝ իրենց ցանկացած ներկայացուցիչներին ընտրելու հավասար պատեհությունը:
3. Շրջանները պետք է գծագրվեն անընդմիջաբար, որպեսզի շրջանի բոլոր մասերը միմյանց հետ կապակցված լինեն:
4. Շրջանները պետք է հնարավորինս նվազագույնի հասցնեն քաղաքների, վարչաշրջանների, թաղամասերի և համայնքների բաժանումը:
5. Շրջանները պետք է լինեն աշխարհագրորեն կոռ. այնպես, որ բնակչության մոտակա տարածքները չշրջանցվեն ավելի հեռավոր բնակչության համար: Այս պահանջմունքը վերաբերում ոչ թե ձևին, այլ՝ խտությանը: Մարդահամարային թաղամասերը չի կարելի բաժանել:
6. Հնարավորության դեպքում, յուրաքանչյուր Սենատի շրջան պետք է բաղկացած լինի երկու ամբողջական և հարակից Ժողովների շրջաններից, իսկ Հավասարեցման խորհրդի շրջանները պետք է բաղկացած լինեն 10 ամբողջական և հարակից Նահանգային Սենատի շրջաններից:

